

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

3.1. Դրամավարկային հիմնական ցուցանիշներ

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի տվյալների, 2000թ. հունվարի վերջի դրությամբ դրամական զանգվածը կազմել է 103925¹ մլն. դրամ և 1999թ. հունվարի վերջի նկատմամբ աճել 6086 մլն. դրամով կամ 6,2 %-ով, իսկ 1999թ. դեկտեմբերի վերջի համեմատ նվազել՝ 7144 մլն. դրամով կամ 6,4 %-ով: Ընդ որում, 1999թ. դեկտեմբերի վերջի համեմատ դրամական զանգվածի նշված փոփոխությունը պայմանավորված է և՛ զուտ արտաքին ակտիվների, և՛ զուտ ներքին ակտիվների նվազմամբ՝ համապատասխանաբար 4595 մլն. և 2549 մլն. դրամով:

Դրամական զանգվածն առանց կուտակված տոկոսների և ծրագրերի իրագործման գրասենյակների (ԾԻԳ-երի) միջոցների 2000թ. հունվարին նվազել է 6585 մլն. դրամով կամ 6,1 %-ով և ամսվա վերջի դրությամբ կազմել՝ 101960 մլն. դրամ:

Դրամական զանգվածի կառուցվածքում 2000թ. հունվար ամսում աճ է գրանցվել միայն ցպահանջ դեպոզիտների գծով՝ 1944 մլն. դրամ կամ 20,2 %: Այս նույն ժամանակահատվածում բանկային համակարգից դուրս կանխիկ դրամը նվազել է 7771 մլն. դրամով կամ 18,2%-ով, իսկ ժամկետային և խնայողական դեպոզիտները համապատասխանաբար՝ 1317 մլն. դրամով կամ 2,2 %-ով:

ՀՀ ազգային արժույթով դրամական զանգվածը կազմել է 50858 մլն. դրամ, իսկ բանկերի կողմից ներգրավված արտարժույթով դեպոզիտները՝ 53067 մլն. դրամ, ընդ որում, արտարժույթով դեպոզիտները 1999թ. դեկտեմբերի վերջի համեմատ նվազել են 1572 մլն. դրամով կամ 2,9 %-ով և կազմել են դրամական զանգվածի 51,1 %-ը: Արտարժույթով դեպոզիտների տեսակարար կշիռը դրամական զանգվածում 1999թ. դեկտեմբերի վերջի համեմատ աճել է 1,9 տոկոսային կետով:

Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամական զանգվածում կազմել է 33,5 % և 1999թ. դեկտեմբերի վերջի համեմատ՝ նվազել 4,9 տոկոսային կետով:

Դրամական բազան հունվարի վերջի դրությամբ կազմել է 49317 մլն. դրամ, այդ թվում ԾԻԳ-երի միջոցները՝ 1103 մլն. դրամ: 2000թ. հունվար ամսում դրամական բազան նվազել է 6151 մլն. դրամով կամ 11,1 %-ով:

Դրամական զանգվածի և բազայի վերոնշյալ փոփոխությունների արդյունքում դրամական բազմարկիչը հունվարին հավասարվել է 2,1-ի:

ՀՀ բանկային համակարգի կողմից ներքին տնտեսության նկատմամբ պահանջները (դրամով և արտարժույթով) 2000թ. փետրվարի 1-ի դրությամբ կազմել են 91376² մլն. դրամ և հունվարի 1-ի համեմատ աճել՝ 1249 մլն. դրամով կամ 1,4 %-ով:

ՀՀ կենտրոնական բանկի ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը³ 2000թ. հունվարին կազմել է 39 %, ինչը տարեսկզբի համեմատ նվազել է 4 տոկոսային կետով:

¹ ընդգրկված են նաև դրամական զանգվածի՝ դեպոզիտների գծով հաշվարկված տոկոսները և կենտրոնական բանկի այլ հաշիվները

² ընդգրկված են հաշվարկված տոկոսները

³ ՀՀ ԿԲ կողմից նախկինում սահմանվող վերաֆինանսավորվող տոկոսադրույքի փոխարեն ներկայումս սահմանվում են ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքներ, որոնցից ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքն իր բնույթով համապատասխանում է նախկին վերաֆինանսավորման տոկոսադրույքին: Բացի այդ, քաղաքացիա-իրավական փոխհարաբերությունները (ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի) կարգավորելու նպատակով ՀՀ ԿԲ սահմանում է նաև բանկային տոկոսի հաշվարկային դրույք, որը 2000թ. հունվարին կազմել է 38%: